

**ԱԼԵՔՍԱՆԴԻ ԽԱՏԻՍՅԱՆԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ
ԱՄԲՈՂՋԱՑՈՒՄԸ**

Ալեքսանդր Խատիսյան. անտիպ գործեր, նամակներ,
նյութեր և փաստաթղթեր, աշխ.՝ **Վլադիմիր Հարությունյանի**,
Եր., «Լուսակն» հրատ., 2023, 752 էջ*:

Բանալի բառեր – Ալ. Խատիսյան, հուշագրություն,
փաստաթուղթ, ընտանիք, Թիֆլիս, Կ. Պոլիս, նամակա-
գրություն, վարչապետ, Հայաստան, բանակցություններ,
աշխարհամարտ, թարգմանություն, վրիպակ, կառավա-
րություն, պայմանագիր, քաղաքագլուխ, բովանդակու-
թյուն, քննություն, ժառանգություն:

Մուտք

Պատմության մեջ նշանակալի հետք թողած անհատ գործիչնե-
րի ստեղծած հարուստ ժառանգության գիտական ուսումնասիրու-
թյունը, արժևորումն ու հրապարակումը պատմագիտական հետազո-
տության իրականացման պարտադիր պայմանն է: Այդ տեսանկյունից
դրվատանքի արժանի գործ է կատարել մաթեմատիկոս, գիտություն-
ների դոկտոր **Վլադիմիր Հարությունյանը**¹: Նրա տրնաջան աշխա-

* Ընդունվել է տպագրության 25.08.2023:

1 Պրոֆեսոր Վլ. Հարությունյանը հեղինակ է նաև պատմագիտական բնույթի այլ փաս-
տաթղթերի ժողովածուների, մենագրությունների և հրապարակումների՝ «Հայ բոլ-
շևիկների հակապետական գործունեությունը 1919–1920 թթ.: Փաստաթղթերի ժողո-
վածու», հատ. Բ, աշխատ.՝ **Վլ. Հարությունյանի**, Եր., «Ատոլիկ» հրատ., 2014, «Հայ-
վրացական պատերազմը (1918 թ.): Նյութեր և փաստաթղթեր», աշխատ.՝ **Վլ.
Հարությունյանի**, Եր., «Անտարես» հրատ., 2014, «Կարսի մարզը Հայաստանի Հան-
րապետության կազմում (ապրիլ 1919 թ.–հոկտեմբեր 1920 թ.): Նյութեր և փաստա-
թղթեր», հատ. Գ, աշխատ.՝ **Վլ. Հարությունյանի**, Եր., «Ատոլիկ» հրատ., 2016, «Կար-
սի նահանգապետ Ստ. Ղորղանեանի յուշերը», աշխատասիրեց՝ **Վ. Յարութիւնեան**,

տանքի շնորհիվ վերջերս ընթերցողի սեղանին է դրվել Հայաստանի առաջին հանրապետության երկրորդ վարչապետ, ականավոր պետական գործիչ **Ալեքսանդր Խատիսյանի** (1874-1945)՝ հուշագրական, փաստավավերագիր և նամակագրական բնույթի անտիպ նյութերի համահավաք ժողովածուն:

Մինչ օրս մեզ հայրնի են Ալ. Խատիսյանի՝ ժամանակագրական առումով իրար շարունակությունը հանդիսացող հուշագրական բնույթի երկու աշխատություններ²: Դրանցից մեկը «Քաղաքապետի մը յիշատակները» խորագրով հուշագրությունն է, որը հիմնականում ընդգրկում է 1905-1907 թթ. Ռուսական հեղափոխությունից մինչև 1917 թ. Փեդրվարյան հեղափոխության հաղթանակն ընկած ժամանակահատվածը, այլ խոսքով՝ Թիֆլիսի քաղաքապետի փեդակալի և սպա քաղաքապետի պաշտոններում նրա կյանքի ու գործունեության ավելի քան տասը տարվա շրջանը: Այն առաջին անգամ հողվածաշարի ձևով հրատարակվել է Բուսրոնի «Հայրենիք» ամսագրի տասը համարներում (1932 թ., N 7, մայիս - 1933 թ., N 5, մարտ):

Ալ. Խատիսյանի հիմնարար աշխատությունը, սակայն, Հայաստանի առաջին հանրապետության ծագմանն ու զարգացմանը նվիրված հատորն է: Այն իր բնույթով դարձյալ հուշագրություն է՝ ավելի հարուստ բովանդակությամբ ու գիրաձևաաչողական արժեքով, որը կարելի է համարել իր ժամանակին Հայաստանի Հանրապետությանը նվիրված երկրորդ հիմնարար աշխատությունը՝ Ս. Վրացյանի «Հայաստանի Հանրապետություն»-ից հետո³: Առաջին հանրապետությանը նվիրված այս երկասիրությունները գրված են սկանսարեսի և գործուն մասնակցի կողմից, քանզի երկու հեղինակներն էլ եղել են ՀՀ վարչապետներ. Ալ. Խատիսյանը՝ 14 ամիս (ամենատերկարը), իսկ Ս. Վրացյանը՝ ընդամենը 12 օր (ամենակարճը):

Եվ ահա Վլ. Հարությունյանն իր նախաձեռնությամբ ու ջանքերով հավաքել, ի մի է բերել ու հրատարակել Ալ. Խատիսյանի՝ հուշագրական բնույթի անտիպ գործերը, նամակները, փաստաթղթերը և այլ

Եր., Հեղ. հրատ., 2018, **Հարությունյան Վլ.**, Առաջին Հանրապետություն. Կարսի վերջնախաղը, Եր., «Լուսակն» հրատ., 2018, «Մարտական գործողությունները Կարս-Ալեքսանդրապոլ ուղղությամբ (1920 թ. հունիս-հոկտեմբեր): Հայկական բանակի սպայի հուշերում», աշխատ.՝ **Վլ. Հարությունյանի**, Եր., Հեղ. հրատ., 2019 և այլն:

2 Տե՛ս **Խատիսյան Ալ.**, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, երեք հրատարակությամբ՝ Աթենք, «Նոր օր» տպ., 1930, Պէյրութ, «Համազգային» տպ., 1968, Եր., «Անի հիմնադրան» հրատ., 2018 և Քաղաքապետի մը յիշատակները, Պէյրութ, «Համազգայինի Վահէ Սէթեան մշակ. կենտ.» տպ., 1991:

3 Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, չորս հրատարակությամբ՝ Փարիզ, Հ. Յ. Դ. Ամերիկայի Կ.Կ. հրատ., 1928, Պէյրութ, տպ. «Մշակ», 1958, Եր., «Հայաստան» հրատ., 1993, Եր., «Անտարես» հրատ., 2018:

նյութեր բովանդակող մի սովորածավալ ժողովածու: Արդ, Ալ. Խատիսյանի՝ մեր հանրությանը հայտնի տպագիր երկու աշխատությունների հետ համադրելով, փորձենք քննել, պարզաբանել ու գնահատել նրա ժառանգության մասը հանդիսացող այս ժողովածուի նորայն ու նշանակությունը հայ պատմագիտության համար:

1. Երկու խոսք Ալեքսանդր Խատիսյանի և Խատիսյան ընտանիքի մասին

Ալեքսանդր Խատիսյանը ծնվել է 1874 թ. փետրվարի 17-ին Թիֆլիսում՝ ազնվական ընտանիքում: Նրա հայրը՝ Հովհաննես (Բվան) Խատիսյանը, գյուղաբնակ էր, պեղական պաշտոնյա՝ Թիֆլիսի նահանգի պեղական գույքի կառավարիչը: Մայրը՝ Մարիամը, Թիֆլիսի նահանգային դպրատան Սրեփան Ղամբարյանի դուստրն էր, գրող ու վիպագիր: Սրեփան Ղամբարյանի որդին՝ Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր Յուրի Ղամբարյանը, հեղափոխում դարձավ 1920 թ. հունվարի վերջին բացված Հայաստանի համալսարանի (ներկայումս՝ ԵՊՀ) առաջին ռեկտորը: Ալ. Խատիսյանի մյուս քեռին եղել է Վարչավայում պեղական բանկի կառավարիչ:

Հովհաննես և Մարիամ Խատիսյաններն ունեցել են հինգ զավակ՝ չորս տղա և մեկ աղջիկ: Ավագ որդին՝ Կոստանդին Խատիսյանը (1864-1913)՝ մասնագիտությամբ ճարտարագետ, ՀՅԴ հիմնադիր անդամներից էր, «Սեւերնիե Նովերա» խմբի ղեկավարը: Հեղափոխում որոշ տարածայնությունների պարձառով տեղափոխվել է Բաքու և սկսել է զբաղվել բանկային ու բարեգործական աշխատանքով⁴, սակայն չի խզել կապը հին ընկերների հետ՝ դրամով օժանդակելով նրանց ձեռնարկներին: Ալեքսանդրն ընտանիքի երկրորդ որդին էր: Երրորդը Գևորգ Խատիսյանն (1876-1935) էր՝ Ամենայն հայոց բանաստեղծ Հ. Թումանյանի փեսան՝ նրա դստեր՝ Աշխենի ամուսինը: Խատիսյան ամուսինների չորրորդ որդին՝ Լևոնը, մասնագիտությամբ լեռնային ճարտարագետ էր: Դաժան ճակատագրի բերմամբ 1920 թ. սեպտեմբերի վերջերին թուրքական զորքերի՝ Հայաստանի վրա հարձակման ժամանակ գտնվել է ճակատամարտում Օլթիում՝ տեղի քարածխի հանքերի պաշարները հեղափոխելու և արդյունահանելու առաջադրանքով, որտեղ էլ վիրավորվել է թշնամու զենքից, սպա՝ սպանվել: Նրա մարմինը չի գտնվել: Ընտանիքի միակ դուստրը՝ Նինան (Նունե), դարձյալ ուսյալ անձնավորություն էր, ով սերտ կապերի մեջ էր Հ. Թումանյանի ընտանիքի հետ:

4 Տե՛ս Խուդինյան Գ., Հ. Յ. Դաշնակցության ծնունդը, Եր., «Արտագետ», 2000, էջ 90-91:

Ալեքսանդր Խարիսյանն ավարտել է Թիֆլիսի պետական գիմնազիան, այնուհետև բժշկական բարձրագույն կրթություն է ստացել Մոսկվայի (3 փարի) և Խարկովի (2 փարի) համալսարաններում, ապա՝ վերապարասարվել Բեռլինում և Փարիզում: Մասնագիտական հարուստ գիտելիքներով և 5-6 լեզուների իմացությամբ 1900 թ. հունվարին վերադարձել է իր ծննդավայր Թիֆլիս և անցել աշխատանքի: Սակայն բժշկի մասնագիտությունը նեղ էր նրա նման լայնախոհ գործչի ու պերճախոս հռետորի համար, քանզի ընդունիքով հոգեպես կապված էին «հայկական գաղափարին»⁵:

1902 թ. Խարիսյանն ընտրվել է Թիֆլիսի քաղաքային խորհրդի (դումայի) անդամ: 1906 թ. նա արդեն Թիֆլիսի քաղաքագլխի օգնական (տեղակալ) էր, իսկ 1909 թ.-ից մինչև 1917 թ. կեսերը՝ Թիֆլիսի քաղաքագլխի, որտեղ հայերը մյուս ազգերի մեջ թվաքանակով գերակշռում էին՝ մոտ 180 հազար, իսկ ամբողջ Կովկասում կար 1.8 մլն հայ⁶:

ՀՅ Դաշնակցության դեմ ցարիզմի հարուցած հանրահայտ լիժնյան դատական գործով Ալ. Խարիսյանը՝ որպես վկա, 1912 թ. Ս. Պետրերբուրգում՝ Սենատի անդամների առջև, հանդես է եկել երեք ժամ փոխադրությամբ ելույթով: Նա ապացուցել է, որ ՀՅԴ կուսակցությունը Ռուսական հեղափոխության շրջանում «իրականացրել է ընդամենը հայ բնակչության պաշտպանությունը թաթարական բանդաներից, որոնց կազմակերպել և ուղղորդել էին ռուսական վարչակարգի փականքները»⁷:

1912-1917 թթ. Ալ. Խարիսյանը Հայ ազգային բյուրոյի փոխնախագահն էր, իսկ Առաջին աշխարհամարտի շրջանում՝ հայ կամավորական գնդերի կազմավորումը նախաձեռնողներից մեկը: Նա էր ապահովում անհրաժեշտ կապը Կովկասյան բանակի շրաբի և ռազմական հրամանատարության հետ՝ զինական ու նյութական միջոցների ստացման նպատակով: 1914-1917 թթ. նա միաժամանակ Կովկասյան 44 քաղաքների միության նախագահն էր և աշխատանքի բերումով մշտական շփումների մեջ էր Կովկասի փոխարքանների՝ կոնս. Ի. Վորոնցով-Դաշկովի և ապա մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչի հետ: Նա հանդես է եկել մամուլում, դասախոսություններ կարդացել հանրության առջև և այլն:

1917 թ. գարնանից Ալ. Խարիսյանն անդամակցել է ՀՅ Դաշնակցությանը: Ս. Վրացյանը Ալ. Խարիսյանի հիմնարար աշխատությանը նվիրված «Երկու խոսք»-ում գրում է, որ Խարիսյանը Փետրվարյան հեղափոխությունից հետո՝ 1917 թ., ընդունվեց ՀՅԴ շարքերը, թեև դրանից առաջ էլ գաղափարա-

5 «Ալեքսանդր Խարիսյան. անտիպ գործեր, նամակներ, նյութեր և փաստաթղթեր», աշխ.՝ **Վլադիմիր Հարությունյանի**, Եր., «Լուսակն» հրատ., 2023, էջ 14 (ռուսերեն) և 229 (հայերեն):

6 Տե՛ս նույն տեղում, էջ 23 (ռուսերեն) և 248 (հայերեն):

7 Նույն տեղում, էջ 21 (ռուսերեն) և 244 (հայերեն):

պես համակրում էր ՀՅ Դաշնակցությանը: Նա մրադրվել էր դեռ 1905 թ. անդամագրվել ՀՅԴ-ին, բայց Ռուսրումի, Հ. Օհանջանյանի և մյուս ընկերների խորհրդով նկատի էր առնվել, որ որպես անկուսակցական համազգային դեմք՝ նա ավելի մեծ ծառայություն կարող էր մատուցել հայ ժողովրդին ու ՀՅ Դաշնակցությանը: Եվ դա նա սպացուցեց իր կյանքով ու գործունեությամբ:

1917 թ. օգոստոսին Ալ. Խաբիսյանը թողնում է Թիֆլիսի քաղաքագլխի պաշտոնը և նույն օրերին ընտրվում Ալեքսանդրասյուլի քաղաքագլուխ, իր իսկ ակնարկով՝ «400 հազարանոց բնակչությամբ Թիֆլիսից տեղափոխվեցի 40 հազարանոց Ալեքսանդրասյուլ»⁸: Դեպքերի բերումով ակնապետ է եղել 1917 թ. բոլշևիկների հոկտեմբերյան հեղաշրջմանը Պետրոգրադում: 1918 թ. ապրիլից Մեյսի անդամ էր, այնուհետև՝ Անդրդաշնային Հանրապետության կառավարության ֆինանսների և պարենավորման նախարար, պաշտոնավարել է և՛ Ե. Գեգեչկորիի, և՛ Ա. Չիսնկելու աշխատասենյակներում⁹: 1918 թ. փետրվար-մարտին Հ. Քաջազունու հետ (խորհրդականներ՝ Ռուբեն և Լեո) մասնակցել է Տրապիզոնի թուրք-անդրկովկասյան, սպա՝ մայիս-հունիսին՝ Բաթումի հայ-թուրքական հաշտության բանակցություններին: 1918 թ. հունիսի 4-ին Հ. Քաջազունու և Մ. Պապաջանյանի հետ ստորագրել է Բաթումի հաշտության պայմանագիրը, որով Արևելահայաստանի մի փոքր հատվածում Թուրքիան, որքան էլ տարօրինակ թվա, առաջինը ձանաչեց Հայաստանի անկախությունը: Հունիսի 2-ին Բաթումից Հայոց ազգային խորհրդին հասցեագրած նամակում, ի մի բերելով հայ-թուրքական բանակցությունների արդյունքները, Ալ. Խաբիսյանը գրում էր. «Մենք կբերենք վար հաշտության պայմանագիր, բայց կբերենք նաև անկախ Հայաստան, տուն, բուն, որտեղ կռվում է ժողովրդական միտքը: Այս բոլորը կկապի, կմիավորի, կբարձրացնի ոգին, իսկ դա կարևոր է: Ես հավատում եմ մեր պետությանը»¹⁰:

1918 թ. հունիսի 15-ից մինչև նոյեմբերի 1-ը Ալ. Խաբիսյանը ՀՀ պարլիտականության կազմում (նախագահ՝ Ա. Ահարոնյան) մասնակցել է Կ. Պոլսում ընթացող հայ-թուրքական բանակցություններին: Ավելի քան չորս ամսվա սպասումներից, թուրքական բարձր իշխանական շրջանակների, մինչև իսկ սուլթանի հետ հանդիպումներից հետո՝ 1918 թ. նոյեմբերին, ՀՀ պարլիտականությունը վերադարձել է հայրենիք:

1918 թ. հուլիսի 24-ին Ալ. Խաբիսյանն ընդգրկվել է Երևանում Հ. Քաջազունու գլխավորած առաջին կառավարության կազմում որպես արտգործնախարար: Սակայն նրա բացակայության ընթացքում (Կ. Պոլսում լինելու պատճառով) այդ պաշտոնը վարել է նախարար-նախագահ Հ. Քաջազունին:

8 Նույն տեղում, էջ 302:

9 Տե՛ս **Խատիսեան Ալ.**, Քաղաքապետի մը յիշատակները, Պէրոյթ, «Համազգայինի Վահէ Սէթեան մշակ. կենտ.» տպ., 1991, էջ 15:

10 «Հայոց պատմություն», հատ. 4, գ. 1, Եր., «Զանգակ» հրատ., 2010, էջ 24:

1919 թ. հունվարից՝ Արամ Մանուկյանի մահից հետո Ալ. Խարիսյանը վարել է ներքին գործերի ու նաև հանրային խնամապարտության և աշխատանքի նախարարների պաշտոնները: 1919 թ. փետրվարի 15-ից վարչապետի պաշտոնակատարն էր, սպրիլի 27-ից մինչև 1920 թ. մայիսի 5-ը՝ ՀՀ վարչապետը և արտգործնախարարը: Հիշարժան է, որ 1919 թ. մայիսի 28-ին իբրև ՀՀ վարչապետ՝ Ալ. Խարիսյանը բազմահազար ժողովրդի, զորքի և հրավիրյալ հյուրերի առջև, «Մեր հայրենիք»-ի հնչյունների ներքո հայերեն և ֆրանսերեն հրատարակել է «Միացյալ և Անկախ Հայաստանի» հռչակագիրը¹¹: Նա իր քաղաքական կենսագրության մեջ մատնանշում է երկու դարակազմիկ իրադարձություն՝ «1918 թ. մայիսի 28-ը, երբ մենք հռչակեցինք **Հայաստանի անկախությունը**, և 1919 թ. մայիսի 28-ը, երբ մենք հռչակեցինք **Միացյալ և Անկախ Հայաստանը**, և այդ օրերն իմ համար եղել են ու կմնան անսասան (աներեր) քաղաքական անկյունաքարեր»¹²:

1920 թ. ամռանը Ալ. Խարիսյանը ՀՅԴ Բյուրո-կառավարության առաջադրանքով գործուղվել է արտասահման, բայց 1920 թ. աշնանը վերադարձել է Հայաստան և Բյուրո-կառավարության հանձնարարությամբ իբրև ՀՀ պարվիրակության ղեկավար մասնակցել նոյեմբեր-դեկտեմբերին Ալեքսանդրապոլում ընթացող հայ-թուրքական բանակցություններին ու դեկտեմբերի 2-ին ստորագրել Ալեքսանդրապոլի հաշտության պայմանագիրը: Ալ. Խարիսյանը բանակցել և որպես պարվիրակության ղեկավար ստորագրել է երկու ծանր պայմանագիր՝ 1918 թ. հունիսի 4-ի Բաթումի և 1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի: Հարկ է փաստել, որ թե՛ Բաթումի, թե՛ Ալեքսանդրապոլի պայմանագրերը պաշտոնապես չեն վավերացվել ո՛չ Հայաստանի և ո՛չ էլ Թուրքիայի օրենսդիր մարմինների կողմից:

Հայաստանի խորհրդայնացումից հետո վերանդի դարձած նախկին վարչապետ Ալ. Խարիսյանը մեկնել է Փարիզ և շարունակել զբաղվել հայոց քաղաքական դատով՝ Հայ դատով: 1921 թ. փետրվարի 10-ին՝ Հայաստանում Փետրվարյան ասպարանքության նախօրեին, ՀՀ պարվիրակության նախագահ Ա. Ահարոնյանի հետ իբրև փոխնախագահ մասնակցել է Լոնդոնի և սպա Լոզանի խորհրդաժողովներին, որոնց մասնակցում էր նաև արևմտահայ պարվիրակությունը՝ ի դեմս Պողոս Նուբար փաշայի և Գ. Նորսարունկյանի: 1920-ական թվականներից սկսել է գրել իր հուշագրությունը: Իբրև հմայող հեղուր, սրամիտ ճառախոս և փորձառու քաղաքագետ շարունակել է վարել նաև հասարակական, դասախոսական և այլ բնույթի աշխատանքներ:

11 Տե՛ս **Հակոբյան Ա.**, Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը հայոց պատմության հովվություն, Եր., «Լուսակն» հրատ., 2020, էջ 74-76:

12 «Ալեքսանդր Խարիսյան. անտիպ գործեր, նամակներ, նյութեր և փաստաթղթեր», էջ 13 (ռուսերեն) և 228 (հայերեն):

Երկրորդ աշխարհամարտի փարիզերին Ալ. Խատիսյանը, խոյս փախով Փարիզի գերմանական օկուպացիայից, Կեդափոխվել է Պորտուգալիա, որտեղ կեղծ ամբաստանությունների հիման վրա ձեռքակալվել է, բայց և շուտով ազատվել է մեղադրական փաստեր չլինելու հիմքով:

Ալ. Խատիսյանը մահացել է 1945 թ. մարտի 10-ին՝ 71 փարեկան հասակում, Փարիզում՝ անջնջելի **հեղափոխություն** թողնելով Հայաստանի առաջին հանրապետության պայմանական և նրա հավաքավոր ժողովրդի հիշողության մեջ: Թաղված է հայ մեծերի համար հանգրվան դարձած Պեր Լաշեզ գերեզմանոցում:

2. Դիտարկումներ ժողովածուի կառուցվածքի, թարգմանության և այլ հարցերի վերաբերյալ

Ալ. Խատիսյանի անտիպ նյութերի այս սովորաձևավալ ժողովածուն բաղկացած է չորս բաժնից:

Առաջին բաժնում (էջ 11–218) ներկայացված է «Русская революция и образование Республики Армения на Кавказе (1917–1918 гг.)» ռուսերեն անտիպ հուշագրությունը՝ գրված **1924–1925 թթ.**, իսկ **երկրորդ բաժնում** (էջ 220–610)՝ դրա հայերեն տարբերակը՝ «Ռուսական հեղափոխությունը և Հայաստանի Հանրապետության ստեղծումը Կովկասում»: Ալ. Խատիսյանն իր ռուսերեն հուշագրությունը պատրաստել էր Բեռլինում տպագրվող «Архивы Русской Революции» (изд. И. В. Гессен) մատենաշարով հրատարակելու համար: Բայց Երկրորդ աշխարհամարտի ավարտին Բեռլինի գրավումից հետո խորհրդային հատուկ ծառայություններն այն բազմաթիվ այլ փաստաթղթերի հետ առգրավել են և փոխադրել ԽՍՀՄ՝ պահ տալով Հոկտեմբերյան հեղափոխության պետական կենտրոնական արխիվին (ЦГАОР): Հուշագրության տիտղոսաթերթին դրված է նշված արխիվի դրոշմակնիքը¹³: Հատորյակի 219–րդ էջում գետեղված՝ «Հուշագրության» ռուսերեն ձեռագիր տեքստի վերջին էջի ֆոտոպատճենից պարզվում է, որ հավանաբար ԽՍՀՄ փլուզումից հետո այն տեղ է գտել Ռուսաստանի նույնանուն արխիվում (Государственный архив Российской Федерации (ГАРФ), ф. Р5881, оп. 1, д. 524, л. 1–323 (рукопись, машинопись))¹⁴:

13 Տե՛ս նույն տեղում, էջ 10 (ռուսերեն) և 220 (հայերեն):

14 Տե՛ս նույն տեղում, էջ 219: Հանգամանքների բերումով Ալ. Խատիսյանի այս անտիպ հուշագրությունը, ինչպես նաև մեծ թվով արխիվային վավերագրեր, նամակներ, ժո-

Բովանդակային առումով հուշագրությունն ընդգրկում է 1900 թ. մինչև 1920 թ. դեկտեմբերի 2-ն ընկած ժամանակահատվածը: Կարող է հարց ծագել, թե որն է այս անտիպ հուշագրության բերած նորույթը: Այն կազմող հեղինակը ճիշտ է նկատել, որ դրա համեմատությունը Խատիսյանի «Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը» աշխատության հետ ցույց է տալիս, որ ռուսերեն հուշագրության նյութերը Խատիսյանը քանիցս օգտագործել է իր գլխավոր աշխատությունը պատրաստելու ընթացքում¹⁵: Ավելին՝ դրա բովանդակած նյութը հիմնական մասով համընկնում է նրա գլխավոր աշխատության շարադրանքի հետ, իսկ առանձին գլուխների վերնագրերը գրեթե նույնն են: Բացի այդ՝ 1924–1925 թթ. այդ հիշողությունները կազմում են նաև 1932–1933 թթ. «Հայրենիք» ամսագրում տպագրված «Քաղաքապետի մը յիշատակները» հոդվածաշարի բովանդակության հիմնական մասը:

Հրատարակված հատորյակի նյութերից արվող հետևությունն այն է, որ 1920–ական թթ. կեսերին գրված հուշագրությունը մեծապես **հիմք ու ատաղձ** է ծառայել 1930–ականների սկզբին Ա. Խատիսյանի վերախմբագրած, թարմ նյութերով հարստացրած ու ամբողջացված ձևով հրատարակած վերոհիշյալ երկու հուշագրական աշխատությունների համար:

Համեմատություն անցկացնելով «Քաղաքապետի մը յիշատակները» հուշագրական աշխատության մեջ և գրախոսվող հատորյակում ներառված հիշողությունների միջև՝ դժվար չէ նկատել տեքստերի բովանդակային նմանությունը և նույնիսկ կրկնությունը: Քաղաքապետի օգնականի և ապա քաղաքագլխի պաշտոնների վարման կապակցությամբ Խատիսյանը հատուկ շեշտադրումներով նկարագրում է ցարիզմի վարած բռնաճնշումների քաղաքականությունը ինչպես ռուսական առաջին հեղափոխության շրջանում, այնպես էլ հաջորդող տասնամյակում: Ի պաշտոնե ավելի մոտ կանգնած լինելով բարձրագույն իշխանության օղակներին՝ նա ընդգծում է կովկասյան տարածաշրջանին վերաբերող հատկապես երեք հարցերում ցարա-

դովածուում գետեղված բոլոր ուշագրավ լուսանկարները պրոֆ. Վ. Հարությունյանին է տրամադրել պատմաբան Մայրի Բաբայանը, և, ինչպես ժողովածուն կազմողն է խոստովանում, «Առանց Մայրիի գործուն և անաչառ աջակցության այս գիրքը պարզապես չէր ստեղծվի» (նույն տեղում, էջ 6):
15 Տե՛ս նույն տեղում, էջ 7–8:

կան կառավարության հանդես բերած բացասական դիրքորոշումը: Դրանցից առաջինը Կովկասի համար **բուհի** բացումն էր, որի գաղափարն արդեն հասունացել էր, երկրորդը՝ **տեղական ինքնակառավարման** մարմինների (**գեմստվոնների**) հիմնումը, և երրորդը՝ **երդվյալ ատենակալների** ինստիտուտի կայացումը: Երեքի պարագայում էլ կառավարությունը ձգձգել կամ պարզապես մերժել է ներքևից բարձրացված հարցերը: Օրինակ՝ գեմստվոնների հարցով քաղաքապետ Ալ. Խատիսյանն անձամբ դիմել էր Ռուսաստանի վարչապետ Պ. Ստոլիպինին, ով պատասխանել էր. «Ես դեմ եմ: Եվ դեմ եմ լինելու, քանզի գեմստվոնների հաստատությունների միջոցով դուք ձեր համար կստեղծեք **ազգային ինքնավարություն**»¹⁶: Նույն հարցով նա դիմել էր նաև Պետական դումայի նախագահ Ալեքսեյ Գուչկովին, և դարձյալ նույն մերժողական պատասխանը. «Մենք չենք կարող օժանդակել այդ ամենին, ինչը որ դուք ցանկանում եք: Մեզ անհրաժեշտ է Կովկասում ուժեղացնել ռուսական տարրը»¹⁷: Քաղաքապետ Խատիսյանը հարյուրավոր հանդիպումներ է ունեցել Կովկասի փոխարքա կոմս Ի. Վորոնցով-Դաշկովի հետ և փաստում է փոխարքայի ավելի հեռատես, խելացի, նրբանկատ, բայց և խորամանկ լինելը¹⁸: Խատիսյանը նշում է, որ փոխարքայի հետ ունեցել է պաշտոնական և անձնական մտերմություն, ինչը «հնարաւորութիւն է տուել իրեն լսել ու տեսնել այնպիսի բաներ, որոնք փակ էին շատ աչքերուն եւ ականջներուն համար»¹⁹:

Հայաստանի խորհրդայնացումից հետո Ալ. Խատիսյանը հիշողությունների ձևով անկեղծ ու անթաքույց թղթին է հանձնել իր խոհերն ու մտքերը, տեսածն ու զգացածը, վերապրածը: Թիֆլիսի երբեմնի քաղաքապետն անթաքույց արձանագրում է, որ 1900–1914 թթ. ռուսական իշխանությունն առաջնորդվում էր Ա. Լոբանով-Ռոստովսկու «Մեզ Հայաստանը պետք է առանց հայերի» հանրահայտ սկզբունքով: Նա նշում է, որ նման թեմայով բազմիցս զրուցել է ռուս բարձրաստիճան պետական պաշտոնյաների հետ, որոնք չէին թաքցնում, որ «Թուրքահայաստանը իրենց պետք է ռազմավարական

16 Նույն տեղում, էջ 20 (ռուսերեն) և 242 (հայերեն):

17 Նույն տեղում:

18 Տե՛ս նույն տեղում, էջ 20 (ռուսերեն) և 243 (հայերեն):

19 **Խատիսեան Ալ.**, Քաղաքապետի մը յիշատակները, «Հայրենիք», Բոստոն, 1932, N 7 (մայիս), էջ 86:

նպատակների համար՝ տիրել Էրզրումը, Ալեքսանդրետով ելք ունենալ դեպի տաք ծով, իսկ Մոսուլ-Բաղդադով՝ ճանապարհ Անգլիային սպառնալու համար»²⁰:

Մեծ հետաքրքրությամբ է ընթերցվում համաժողովրդական բնույթ ստացած կամավորական շարժման վերաբերյալ հեղինակի հուշապատումը՝ Անդրանիկի, Համազասպի, Դրոյի, Վարդանի, Քեռու, Իշխանի (Արդուոյան)՝ իրար հետևից Թիֆլիս գնալը, ուսանողների ու գիմնազիստների՝ ուսումը թողնելը և այդ շարժմանն անդամագրվելը²¹: Աշխարհամարտի առաջին փուլի նրա նկարագրությունն այնքան հանգամանալի է, հետաքրքիր ու համոզիչ, որ անգամ Ս. Վրացյանի հուշերը տեղ-տեղ զիջում են ներկայացվածին: Ինչպես հայտնի է, 1914 թ. նոյեմբերին Նիկոլայ 2-րդ ցարը ժամանել էր Թիֆլիս, և քաղաքապետ Ալ. Խատիսյանն ի պաշտոնե չորս օր ռազմաճակատի շտաբի պետ գեներալ Ն. Յուդենիչի հետ ուղեկցել է ցարին ու շրջել քաղաքային հիմնարկությունները, գորանոցները, հիվանդանոցները և այլն: Ուշագրավ է այն փաստը, որ նա ինքն է անձամբ Արամյանցի հիվանդանոցում ցարին ներկայացրել Բայազետի մոտ կրծքից վիրավորված Դրոյին: Հայտնի է նաև Նիկոլայ 2-րդ ցարի և հիվանդանոցի պալատում պառկած Դրոյի թռուցիկ զրույցը, հատկապես վերջինիս՝ «**հեղափոխական**» լինելու արտահայտությունից ցարի շփոթվելու և Դրոյին «Գեորգիևյան խաչով» պարգևատրելու փաստը²²:

Իր հիշողություններում Խատիսյանը շոշափել է նաև քաղաքական հարցեր: Իբրև Թիֆլիսի քաղաքագլուխ՝ նա ցույց է տալիս, թե ինչպես են հայերը, գրեթե անկախ սոցիալական պատկանելությունից ու քաղաքական համոզմունքից, հանուն ռուսական գեներալի թանակի համակողմանի մասնակցություն բերել թե՛ ռազմաճակատում և թե՛ թիկունքում՝ ակնկալելով առաջին հերթին տաճկահայ խնդրի ցանկալի լուծումը: Կովկասի փոխարքան, նրա կինը, մյուս իշխանավորները ակներև տեսնում էին հայերի կողմնորոշումը դեպի Ռուսաստան, մի բան, որ նրանք չէին նկատել վրաց ու հատկապես կովկասյան թաթարների շրջանում: Այսպես՝ Ալ. Խատիսյանը՝ իբրև ականատես, ակնարկում է այն մասին, թե ինչպես էր փոխարքայի

20 «Ալեքսանդր Խատիսյան. անտիպ գործեր, նամակներ, նյութեր և փաստաթղթեր», էջ 24 (ռուսերեն) և 249-250 (հայերեն):

21 Տե՛ս նույն տեղում, էջ 30 (ռուսերեն) և 259 (հայերեն):

22 Տե՛ս նույն տեղում, էջ 34-35 (ռուսերեն) և 271-272 (հայերեն):

կինը ջերմորեն ընդունում Թիֆլիսի հայոց թեմի առաջնորդ Մեսրոպ Եպիսկոպոսին, մինչդեռ իրեն սառն էր պահում վրաց իշխան Կ. Աբխազիի հետ, իսկ թաթարների ներկայացուցիչ Ասադուլանին հարկ չէր համարում անգամ ձեռք մեկնել²³:

Մեկ այլ առիթով էլ Ալ. Խատիսյանն ակնարկում է, որ կամավորական շարժման այդ բուռն օրերին Ազգային բյուրոյի ղեկավար կազմը՝ Սամսոն Հարությունյանը, Թիֆլիսի թեմի առաջնորդ Մեսրոպ Եպիսկոպոսը և ինքը (Ազգային բյուրոյի փոխնախագահ), Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Գաշկովի ընդունելությանն են արժանացել: Վերջինս հայտնել է իր կարծիքը, որ խոստման էր նման. «Ես կարծում եմ, որ այն ամենալավը, ինչը թուրքահայերը պետք է ստանան մեր հաղթանակից հետո, դա պետք է լինի Սիրիայում Լիբանանյան Սահմանադրության օրինակով մի Սահմանադրություն: Ես այդպես էլ գրել եմ ցարին»²⁴:

Ալ. Խատիսյանի անտիպ հուշագրության **3-10-րդ** գլուխների վերնագրերը հիմնականում համընկնում են նրա հիմնարար՝ «Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը» աշխատության գլուխների վերնագրերին: Օրինակ՝ սույն հուշագրության 3-րդ գլուխը վերնագրված է «Ժամանակավոր կառավարությունը և հայերը (1917 թ. մարտ-նոյեմբեր)», իսկ «Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը» աշխատության Ա գլուխը՝ «Ռուսաստանի ժամանակաւոր կառավարութիւնը եւ Հայերը», կամ հուշագրության 4-րդ գլուխը՝ «Անդրկովկասյան Կոմիսարիատը և Թուրքիայի հետ առաջին բանակցությունները Տրապիզոնում», իսկ աշխատության Գ գլուխը՝ «Անդրկովկասեան կոմիսարիատը եւ բանակցութիւնները Թուրքիոյ հետ», կամ հուշագրության 7-րդ գլուխը՝ «Անդրկովկասյան Հանրապետության տրոհումը, Հայաստանի անկախության հռչակումը», իսկ աշխատության Ե գլուխը՝ «Անդրկովկասի միութեան քայքայումը եւ Հայաստանի անկախութեան հռչակումը», և այդպես գրեթե մինչև վերջ: Նույնը կարելի է ասել բովանդակության, դեպքերի և իրադարձությունների նկարագրության, օգտագործված փաստերի ու փաստաթղթերի մասին: Այսինքն՝ Ալ. Խատիսյանի անտիպ հուշերի և

23 Տե՛ս սույն տեղում, էջ 36 (ռուսերեն) և 275 (հայերեն):

24 Նույն տեղում, էջ 30 (ռուսերեն) և 259 (հայերեն):

հրապարակի վրա եղած աշխատությունների կառուցվածքների, բովանդակությունների, հաճախ էլ բերված փաստերի ու արված դատողությունների միջև էական տարբերություններ չկան: Սակայն գնահատելին այն է, որ **Ալ. Խատիսյանի անտիպ հուշագրության լուսարձայունով ամբողջանում են նրա ստեղծած գրավոր ժառանգությունը հրապարակ բերելու աշխատանքները:**

3. Դիտարկումներ Ալ. Խատիսյանի հուշագրության հայերեն թարգմանության և տողատակի ծանոթագրությունների վերաբերյալ

Գրախոսվող ժողովածուի ամենարնդարձակ՝ 2-րդ բաժինը Ալ. Խատիսյանի 1924–1925 թթ. ռուսերեն գրած հուշերի հայերեն թարգմանությունն է, որն ընդգրկում է 220–610-րդ էջերը: Հայերեն թարգմանությունը հիմնականում կատարված է որակով ու մեքենագիր բնագրին հարազատությունը պահպանելով: Մյուս առավելությունն այն է, որ հատորյակի կազմողն ու խմբագրակազմի անդամները տողատակերում տվել են հանգամանալի ծանոթագրություններ, ինչպես նաև բերված են մեջբերումներ արխիվներից ու գրականությունից, որոնք, անշուշտ, մեծացնում են աշխատության գիտական արժեքը: Կարծում ենք՝ Վլ. Հարությունյանը միանգամայն ճիշտ է վարվել, որ ավելորդ կրկնություններից և գրքի ծավալի էլ ավելի մեծացումից խուսափելու նպատակով ծանոթագրություններ չի տվել նաև հուշագրության ռուսերեն տարբերակում:

Ալ. Խատիսյանի հուշագրությանը ծանոթանալիս դժվար չէ նկատել, որ հեղինակը չի բավարարվել միայն սեփական դիտարկումներով, տեսածի ու լսածի նկարագրություններով: Դրանք ավելի հարստացնելու և գիտական արժեքն ապահովելու նպատակով նա օգտվել է իր ձեռքի տակ եղած պաշտոնական և ոչ պաշտոնական սկզբնաղբյուրներից, հրաման–որոշումներից, արխիվային փաստաթղթերի ժողովածուներից²⁵, իր անձնական օրագրերից, այլ հիշողություններից, մամուլից և այլն: Օրինակ՝ բերված են Անդրկովկասյան սեյմի 1918 թ. փետրվարի 16 (մարտի 1)–ի նիստի սղագրական արձա-

25 Օրինակ՝ «Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии», Тифлис, Б. и., 1919:

նագրությունը, Նոյ Ռամիշվիլու 12-էջանոց զեկուցումը Տրապիզոն մեկնող անդրկովկասյան պատվիրակության անելիքների մասին²⁶, հղումներ են արված Տրապիզոնի ձախողված բանակցություններից հետո Անդրկովկասյան սեյմի և կառավարության ապրիլի 9 (22)-ի որոշմանը, Անդրկովկասյան Դաշնային Հանրապետության անկախության հռչակմանը Հ. Քաջազնունու և Խ. Կարճիկյանի արձագանքին, ներկայացված է նաև Թուրքիայի պատվիրակության ղեկավար Խալիլ բեյի՝ անդրկովկասյան կառավարությանը ներկայացրած 72-ժամյա վերջնագրի տեքստը և այլն²⁷:

1918 թ. հայ-վրացական հարաբերությունների սրման և սահմանավեճերի հետևանքով բռնկված կարճատև պատերազմի առնչությամբ հուշագրության 9-րդ գլխում գետնելված են երեք տասնյակից ավելի փաստավավերագիր և դիվանագիտական բնույթի թղթածրարներ, կառավարական որոշումներ, բանաձևեր, հրամաններ, նամակներ, հեռագրեր, ռադիոգրեր և այլն²⁸: Օգտագործվել են նաև «Կովկասյան տարեցույց»-ի, Երևանի զինվորական պարետ Ա. Շահխաթունու հայտնի աշխատության²⁹ վիճակագրական տվյալները Անդրկովկասի բնակչության էթնիկ կազմի և բաշխվածության վերաբերյալ³⁰,

26 Տե՛ս «Ալեքսանդր Խատիսյան. անտիպ գործեր, նամակներ, նյութեր և փաստաթղթեր», էջ 356-369:

27 Տե՛ս նույն տեղում, էջ 410, 454-456: Համաձայն չենք հուշագրության մեջ տեղ գտած այն պնդմանը, թե «Հենց ապրիլի 9 (22)-ի այդ հայտարարությունում պետք է փնտրել հաջորդ՝ 1918 թ. մայիսի 26-ի և 28-ի ակտի արմատները, այն է՝ Անդրկովկասյան երեք հանրապետությունների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի անկախության հռչակումը» (նույն տեղում, էջ 116-117 (ռուսերեն) և 411 (հայերեն)): Մեր կարծիքով՝ տվյալ դեպքում Հայաստանի անկախության հիմքերը պետք է փնտրել ոչ թե Թուրքիայի պարտադրանքով Անդրկովկասի անկախության հռչակման ու ձանաչման, այլ մայիսյան հայտնի դիմադրության, նաև Բաքվի հայության հերոսական պաշտպանության մեջ:

28 Տե՛ս նույն տեղում, էջ 185-211 (ռուսերեն) և 518-554 (հայերեն):

29 Տե՛ս **Шахатуния А.**, Административный передел Закавказского края, Тифлис, тип. «Ашхатавор», 1918:

30 Խատիսյանի բերած տվյալներով՝ Անդրկովկասում մահմեդականները կազմում էին ընդհանուր բնակչության 42.02 %-ը, հայերը՝ 22.92 %-ը, վրացիները՝ 20.89 %-ը: Հայերի թիվն Անդրկովկասում կազմում էր 1.803.556, վրացիներինը՝ 1.651.378 (տե՛ս «Ալեքսանդր Խատիսյան. անտիպ գործեր, նամակներ, նյութեր և փաստաթղթեր», էջ 164 (ռուսերեն) և 486 (հայերեն)): Սակայն ռուսական վիճակագրության բացերից մեկն այն էր, որ նշվում էր ազգաբնակչության ոչ թե էթնիկ, այլ զուտ կրոնական պատկանելությունը, տվյալ դեպքում՝ **մահմեդական** եզրույթով, որով այն ժամանակներում նշվում էին կովկասյան թաթարները, քրդերը, կարափափախները, թալիշները, լեզգիները և այլն: Մինչդեռ հայերի և վրացիների պարագայում նշվում էր

Ֆրանսիայի զինվորական ներկայացուցիչ, կապիտան Ա. Պուադեբարի հուշերը Կովկասյան ռազմաձևակառույցում իրադրության մասին և այլն: Հուշապատումի հեղինակն օգտվել է նաև Բոստոնում գտնվող ՀՅԴ կենտրոնական արխիվի նյութերից:

Նշենք, որ ժամանակագրական հաջորդականությամբ հատորյակում ներկայացված Ալ. Խատիսյանի հուշերի 2-րդ բաժնի 10 գլուխներից 9-ը (հայերեն թարգմանության 220-556-րդ էջերը) վերաբերում են Հայաստանի մինչհանկախության շրջանին, և միայն 10-րդ գլխում է՝ ընդամենը 10 էջ (էջ 557-567), թռուցիկ խոսվում Հայաստանի Հանրապետության մասին, ինչի առնչությամբ հեղինակը նշում է, որ նրա պատմությունն ավելի հանգամանալի կներկայացնի իր մենագրությունում. խոսքը «Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը» հիմնարար աշխատության մասին է:

4. Դիտարկումներ ժողովածուում տեղ գտած նամակների, փաստաթղթերի ու նյութերի, ինչպես նաև նկատված անձնությունների ու վրիպակների վերաբերյալ

Ժողովածուի ուշագրավ բաժիններից է երրորդը, որում ներառված են Ալ. Խատիսյանի նամակները՝ մեծ մասամբ ուղղված 1918 թ. ամռան-աշնանը Բեռլինում գտնվող ՀՀ պատվիրակության ղեկավար Համո Օհանջանյանին (30 նամակ)³¹: Հիմնականում Կ. Պոլսից Ալ. Խատիսյանը նամակներ է հղել Բեռլին ռազմաքաղաքական կացության, Կենտրոնական Եվրոպայի երկրների նախաձեռնած Կ. Պոլսի խորհրդածոցի չկայացման, հայ-թուրքական բանակցությունների ձգձգման և այլ հարցերի շուրջ³²: Այդ նամակները, անշուշտ, նորույթ են և կարող են օգտակար լինել 1918 թ. դիվանագիտական բարդ հարցերի լուսաբանման համար: Հատորի կազմողները չեն զլացել

ոչ թե կրոնական, այլ էթնիկ պատկանելությունը: Այդ պատճառով էլ հայերն ու վրացիները քանակական և տոկոսային հարաբերակցության տեսանկյունից զիջել են մահմեդականներին: Այս «ավանդույթը» պահպանվեց նաև խորհրդային պետության առաջին մեկ-երկու տասնամյակներին (1920-1930-ական թթ.): Մինչդեռ վերը նշված մահմեդական տարրերը, այդ թվում նաև՝ կովկասյան թաթարները, որոնց սկսեցին անվանել ադրբեջանցի, դեռևս չէին ձևավորվել որպես **ազգ**:

31 Արխիվային վավերագրերի արժեք ունեցող այդ նամակների էլեկտրոնային տարբերակները Վլ. Հարությունյանին է փոխանցել դարձյալ Մայրլ Բաբայանը:

32 Տե՛ս նույն տեղում, էջ 611-668:

ռուսերեն, իսկ մեկ-երկու դեպքում էլ ֆրանսերեն բնագրերի հետ ներկայացնելու նաև հայերեն թարգմանությունները՝ դարձյալ անհրաժեշտ ծանոթագրություններով:

Գրախոսվող ժողովածուի 598-610-րդ էջերում հավելվածի ձևով գետեղվել է ՀՀ երրորդ վարչապետ Հ. Օհանջանյանի՝ 1920 թ. վերջերին գրած «Հայաստանի Հանրապետության երկամեայ կեանքը» վերտառությամբ հողվածաշարը, որը տպագրվել էր Թեհրանի «Ալիք» օրաթերթի 1964 թ. նոյեմբերի երկու համարներում:

Ժողովածուում տեղ է գտել նամակների մեկ այլ խումբ, որը ընդգրկում է 1922-1945 թվականները: Դրանց թվում են Ալ. Խատիսյանին ուղղված Հ. Քաջագնունու 1922 թ. ապրիլի 10-ի և 11-ի ընդարձակ նամակները Հայկական հարցի, Լոնդոնի խորհրդաժողովի, հայկական ազգային օջախի ստեղծման հեռանկարների վերաբերյալ³³: Այստեղ է նաև Ալ. Խատիսյանի քաղաքական ու անձնական բնույթի նամակագրությունը Ա. Վրացյանի, Արտ. Չիլինգարյանի, Ն. Աղբալյանի, Վ. Փափագյանի և մյուսների հետ³⁴: Ժողովածուում տեղ է գտել նաև Ալ. Խատիսյանի՝ հետադարձ հայացքով գրված հողվածը՝ նվիրված Հայաստանի Հանրապետության հռչակման 17-ամյակին (1918-1935 թթ.)³⁵:

Եվ վերջապես, գրախոսվող ժողովածուում գետեղված են Ալ. Խատիսյանի կյանքին, ընտանիքին ու շրջապատին առնչվող, մեր կարծիքով, մեծ մասամբ նորահայտ նկարներ, որոնք ևս որոշակի տեսք ու բովանդակություն են հաղորդում գրքին: Ինչ վերաբերում է Ալ. Խատիսյանի նամակագրության երկրորդ մասի նորահայտ լինելուն, կարծում ենք՝ այդ նամակների էլեկտրոնային, նաև սկանավորված տարբերակները Բեյրութի «Համազգայինի» կենտրոնական արխիվի՝ Ս. Վրացյանի, Ն. Աղբալյանի, Վ. Փափագյանի համապատասխան ֆոնդերի նյութերից են:

Ժողովածուի վերջին՝ «Նյութեր և փաստաթղթեր» բաժնում ուշագրավ է ՀՀ խորհրդարանի 1919 թ. օգոստոսի 7-ի թիվ 165 (գրքում սխալմամբ նշված է 65) որոշման հնամաշ վկայականը Ալ. Խատիսյանի՝ հանրապետության վարչապետ ընտրվելու վերաբերյալ³⁶: Ինչ

33 Տե՛ս նույն տեղում, էջ 669-682:

34 Տե՛ս նույն տեղում, էջ 682-704:

35 Տե՛ս նույն տեղում, էջ 707-717:

36 Տե՛ս նույն տեղում, էջ 723:

վերաբերում է գրախոսվող ժողովածուում նկատված կառուցվածքային, բովանդակային, խմբագրական ու տեխնիկական թերություններին, անձշտություններին, սխալներին ու վրիպակներին, ապա այդպիսիք անխուսափելի են ցանկացած աշխատանքում:

Ալ. Խատիսյանի հուշագրության ռուսերեն մեքենագիր տարբերակում ևս տեղ են գտել առանձին անձշտություններ ու վրիպակներ: Հայերեն թարգմանության մեջ թարգմանիչ-խմբագիրներն այդ անձշտությունները հիմնականում շտկել են, բայց իրենք էլ իրենց հերթին են թույլ տվել նմանատիպ սխալներ: Այսպես՝ հայտնի դատական քննիչի **Лимин** անունը (տե՛ս էջ 21) իրապես շտկվել է **Լիժին** կամ **Լրժին** ձևով, շտկվել է Հայ բարեգործական միության և Ազգային բյուրոյի նախագահ Սամսոն Հարությունյանի ազգանունը, որը 29-րդ էջում սխալմամբ նշված է **Арзруновна**: Արտաշես Բաբայանի ազգանունը ռուսերենում նշված է **Բադայան** (տե՛ս էջ 32): Նույն էջում կա «Ռուբեն Միքայելյան» անուն-ազգանունը, բայց հայերեն թարգմանված տարբերակում այն առհասարակ բացակայում է (տե՛ս էջ 263): Կամ՝ հայերեն տարբերակում **Վեթիլով**-ը դարձել է **Վեհիլով** (տե՛ս էջ 295), **Շահխաթունի**-ն՝ **Շահատունի** (տե՛ս էջ 304): Հայերեն թարգմանության մի շարք էջերում **Երզնկա**-ն նշված է **Երզինջան** (տե՛ս էջ 330, 354-355, 381 և այլն):

Կան թարգմանական բնույթի անհարթություններ, օրինակ՝ «բռնանվաճումը» պիտի լիներ «բռնագրավում» (տե՛ս էջ 306), «Անդրկովկասյան հատուկ կոմիտե»-ն (ՕԶաԿոմ) մի շարք էջերում (295, 301, 316 և այլն) ներկայացված է «Հատուկ Կովկասյան Կոմիտե» կամ «Կովկասյան Հատուկ Կոմիտե»: Կամ՝ «приходил ноябрь»-ը (տե՛ս էջ 34) թարգմանվել է «Անցնում էր արդեն նոյեմբերը» (տե՛ս էջ 270), այնինչ պիտի լիներ «Մոտենում էր նոյեմբերը» և այլն:

Կան նաև փաստական սխալներ, օրինակ՝ 98-րդ (ռուսերեն) և 381-րդ (հայերեն) էջերում նշված է, որ Բրեստի պայմանագիրը կնքվել է փետրվարի 28-ին, այնինչ այն կնքվել է 1918 թ. մարտի 3-ին, 121-րդ (ռուսերեն) և 418-րդ (հայերեն) էջերում նշված է, որ Ֆ. Խան-Խոյսկին սպանվել է 1921 թ., բայց իրականում նա ահաբեկվել է 1920 թ. հունիսին Թիֆլիսում, 163-րդ (ռուսերեն) և 484-րդ (հայերեն) էջերում Գ. Խատիսյանը նշված է որպես հուշագրի ավագ եղբայր, այնինչ նա կրտսերն էր:

Աշխատանքում տեղ են գտել բազմաթիվ վրիպակներ (տե՛ս էջ 271, 290 և այլն): Ցանկալի կլիներ՝ գրքի կազմին և կազմաշապիկին լիներ միայն «**Ալեքսանդր Խատիսյան (1874-1945 թթ.)**» մասը, իսկ մնացածը թողնվեր տիտղոսաթերթին, մանավանդ որ այն պատրաստվել է մեծ գործչի մոտեցող 150-ամյակի առիթով: Ընդհանրացնենք. սույն ժողովածուում նկատված բացերն ու թերությունները բնավ չեն նսեմացնում կատարված մեծածավալ աշխատանքը, որը, մեր կարծիքով, արժանի է դրվատանքի ու բարձր գնահատականի:

Այսպիսով՝ կարելի է արձանագրել, որ պրոֆեսոր Վլ. Հարությունյանի աշխատասիրությամբ հրատարակ բերված հայ խոշոր պետական գործիչ ու դիվանագետ Ալեքսանդր Խատիսյանի հուշագրական ու փաստավավերագիր նյութերի ժողովածուն գալիս է ամբողջացելու նրա քաղաքական, գրական և հուշագրական ժառանգությունը:

Սույն հատորյակի արժանիքներից է այն, որ առաջին անգամ կոլեկտիվ ջանքերով Ալ. Խատիսյանի հուշագրության բնագիր տեքստը թարգմանվել է հայերեն, ինչպես նաև տողատակերում տրվել են հանգամանալի ծանոթագրություններ, ինչն էսպես մեծացրել է աշխատության գիտական արժեքը: Գրքում բերված են նաև հարուստ մեջբերումներ արխիվներից և գրականությունից:

Մեծ հետաքրքրությամբ են ընթերցվում հատկապես Ալ. Խատիսյանի խոհերը իբրև Թիֆլիսի քաղաքագլուխ պաշտոնավարման շրջանի վերաբերյալ, երբ գործի բերումով նա մշտապես շփվել է Ռուսաստանի բարձրաստիճան պետական ու ռազմական գործիչների հետ և գործուն մասնակցություն ունեցել անդրկովկասյան տարածաշրջանի քաղաքական գործընթացներում: Եվ առհասարակ անհնար է պատկերացնել Հայաստանի առաջին հանրապետության պատմությունն առանց հնուտ դիվանագետ ու նշանավոր պետական գործիչ Ալ. Խատիսյանի:

Իհարկե, 1924-1925 թթ. Խատիսյանի ռուսերեն գրած հուշագրությունը իր հարցադրումներով ու բովանդակությամբ ամբողջապես նորույթ չէ, սակայն դրանում եղած նյութը հիմք ու ատաղձ է հանդիսացել հետագայում՝ 1930-ական թթ. սկզբներին, նրա երկու հիմնարար հուշագրական բնույթի մենագրությունների պատրաստման և հրատարակման համար: Ինչ վերաբերում է հատորյակում տեղ գտած Ալ. Խատիսյանի նամակներին, ապա դրանք հիմնական մասով նո-

րույթ են, որոնք խոսում են հմուտ դիվանագետի ու պետական գործչի հեռատեսության, հավասարակշռված և զուսպ վարքագծի, Հայաստանի ու տարածաշրջանի դեպքերն ու իրադարձություններն օրյեկտիվորեն գնահատելու մասին:

Արարատ Մ. Հակոբյան

Պատմ. գիտ. դոկտոր

Արարատ Մ. Հակոբյան – գիտական հետաքրքրությունների շրջանակում են նոր և նորագույն շրջանների հայ հասարակական-քաղաքական մտքի, ազգային կուսակցությունների, Հայաստանի առաջին հանրապետության, 1920 թ. թուրք-հայկական պատերազմի, 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի, հայ պատմագրության, խորհրդային քաղաքական բռնաձնշումների, հայ պարբերական մամուլի և այլ բազում հիմնահարցեր: Հեղինակ է 20 մենագրության, 12 անհատական և կոլեկտիվ ձեռնարկի ու ուսումնամեթոդական աշխատանքի, ավելի քան 100 գիտական հոդվածի:

Էլ. հասցե՝ ararathakobyan47@gmail.com

Summary

COMPLETING THE LEGACY OF ALEXANDER KHATISYAN

Alexander Khatisyan. unpublished works, letters, materials and documents, prepared by **Vladimir Harutyunyan**, Yerevan, "Lusakn" hrat., 2023, 752 pages.

Ararat M. Hakobyan

Doctor of Sciences in History

Key words – Khatisyan, memoir, document, family, Tiflis, Constanthնուօյլիս, correspondence, Prime Minister, Armenia, negotiations, world war, translation, error, government, contract, mayor, content, exam, heritage.

A collection of memoirs and documentary materials dedicated to Alexander Khatisyan, published thanks to the hard work of Professor VI.

Harutyunyan, complements the scientific, literary and memoir heritage of a major Armenian statesman and diplomat.

It is of particular interest to study the detailed description of the 10-year period when Al. Khatisyan served as mayor of Tiflis is, during which he constantly interacted with high-ranking government and military figures of Tsarist Russia and actively participated in the political processes of the Caucasus region.

Moreover, it is impossible to imagine the history of the first Republic of Armenia without the skilled diplomat and prominent statesman Al. Khatisyan. Of course, Khatisyan's memoirs about this period prepared in Russian in 1924-1925 are not entirely new in their structure and content, but the material in them served as the basis and source for the preparation and publication of his two fundamental memoirs in the 1930s.

One of the advantages of the one-volume book under review is the fact that for the first time, through collective efforts, the text of the original memoirs of Al. Khatisyan was translated into Armenian. It also provides detailed footnotes, which significantly increases the scientific value of the work. The book also contains abundant quotations (links) from archives and literature.

As for the published letters of Al. Khatisyan, they are mostly new. Their content shows the foresight, balance and restraint of a skilled diplomat and statesman, an objective and balanced presentation of events and incidents in Armenia and the entire region during the complex period of the existence of the Republic of Armenia. However, the collection also contains some inaccuracies and errors that are inevitable in any work.

УСТАНОВЛЕНИЕ ЦЕЛОСТНОСТИ НАСЛЕДИЯ АЛЕКСАНДРА ХАТИСЯНА

Александр Хатисян. Неопубликованное дело, письма, материалы и документы, подг. **Владимир Арутюнян**, Ереван, Издательство «Лусакн», 2023, 752 с.

Арарат М. Акопян
Доктор ист. наук

Ключевые слова – Хатисян, мемуары, документ, семья, Тифлис, К. Полис, переписка, премьер-министр, Армения, переговоры, мировая война, перевод, ошибка, правительство, контракт, мэр, содержание, экзамен, наследие.

Сборник воспоминаний и документальных материалов, посвященных Александру Хатисяну, изданный благодаря упорному труду профессор Вл. Арутюняна, дополняет научное, литературное и мемуарное наследие крупного армянского государственного деятеля и дипломата.

Особый интерес представляет подробно изложенная история 10-летнего периода, когда Ал. Хатисян находился на посту мэра Тифлиса, в течение которого он постоянно взаимодействовал с высокопоставленными государственными и военными деятелями царской России и активно участвовал в политических процессах Кавказского края.

Более того, невозможно представить историю первой Республики Армения без искусного дипломата и видного государственного деятеля Ал. Хатисяна. Конечно, подготовленные на русском языке в 1924-1925 гг. воспоминания Хатисяна об этом периоде не совсем новы по своей структуре и содержанию. Но содержащийся в них материал послужил основой и источником для подготовки и издания двух его фундаментальных мемуарных трудов в 1930-е гг.

Одним из достоинств рецензируемого однотомника является тот факт, что впервые коллективными усилиями на армянский язык переведен текст оригинала воспоминаний Ал. Хатисяна, а также приведены подробные сноски, что и значительно повышает научную ценность произведения. Книга также содержит богатые цитаты (ссылки) из архивов и литературы.

Что касается публикуемых писем Ал. Хатисяна, они в основном не были ранее изданы. Их содержание показывает дальновидность, уравновешенность и сдержанность искусного дипломата и государственного деятеля, объективное и взвешенное изложение событий и происшествий в Армении и целом в регионе в

многосложный период существования Республики Армения. Однако в сборнике есть и некоторые неточности и ошибки, которые неизбежны в любой работе.

REFERENCES

1. “Alek’sandr Khatisyan. antip gortser, namakner, nyut’er yev p’astat’ght’er”, ashkh.: **VI. Harut’yunyani**, Yer., “Lusakn” hrat., 2023 (**In Armenian**).
2. “Dokumenty i materialy po vneshnej politiki Zakavkaz’ja i Gruzii”, Tiflis, B. i., 1919 (**In Russian**).
3. “Hay bolshevikneri hakapetakan gortsuneut’yuně 1919-1920 t’t.: P’astat’ght’eri zhoghovatsu”, ashkhat.: **VI. Harut’yunyani**, Yer., “Asoghik” hrat., 2014 (**In Armenian**).
4. “Hayots’ patmut’yun”, hat. 4, g. 1, Yer., “Zangak” hrat., 2010 (**In Armenian**).
5. “Hay-vrats’akan paterazmė (1918 t.): Nyut’er yev p’astat’ght’er”, ashkhat.: **VI. Harut’yunyani**, Yer., “Antares” hrat., 2014 (**In Armenian**).
6. “Karsi marzė Hayastani arajin hanrapetut’yan kazmum (april 1919 t.-hoktember 1920 t.): Nyut’er yev p’astat’ght’er”, ashkhat.: **VI. Harut’yunyani**, Yer., “Asoghik” hrat., 2016 (**In Armenian**).
7. “Karsi nahangapet St. Ghorghaneani yusherė”, ashkhatasirets’: **V. Yarut’iwnean**, Yer., Hegh. hrat., 2018 (**In Armenian**).
8. “Martakan gortsoghut’yunnerė Kars-Alek’sandrapol ughghut’yamb (1920 t. hunis-hoktember): Haykakan banaki spayi husherum”, ashkhat.: **VI. Harut’yunyani**, Yer., Hegh. hrat., 2019 (**In Armenian**).
9. **Hakobyan A.**, Miats’yal yev Ankakh Hayastani gaghap’arė hayots’ patmut’yan holovuyt’um, Yer., “Lusakn” hrat., 2020 (**In Armenian**).
10. **Harut’yunyan VI.**, Arajin hanrapetut’yun. Karsi verjnakhaghė, Yer., “Lusakn” hrat., 2018 (**In Armenian**).
11. **Khatisean Al.**, Hayastani Hanrapetut’ean tsagumn u zargats’umė, At’ėnk’, “Nor ėr”, 1930, Pėyрут’, “Hamazgayin” tp., 1968, Yer., “Ani himnadram” hrat., 2018 (**In Armenian**).
12. **Khatisean Al.**, K’aghak’apeti mė yishataknerė, Pėyрут’, “Hamazgayini Vahė Sėt’ean mshak. kent.” tp., 1991 (**In Armenian**).
13. **Khudinyan G.**, H. Y. Dashnaks’ut’yan tsundė, Yer., “Artagers”, 2000 (**In Armenian**).
14. **Shaxatunjan A.**, Administrativnyj peredel Zakavkazskogo kraja, Tiflis, “Ashxatavor” , 1918 (**In Russian**).
15. **Vrats’ean S.**, Hayastani Hanrapetut’iwn, P’ariz, H. Y. D. Amerikayi K. K. hrat., 1928, Pėyрут’, “Mshak” tp., 1958, Yer., “Hayastan” hrat., 1993, “Antares” hrat., (**In Armenian**).